## ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏ 11

Վայր՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Նոր Արթիկ բնակավայր, 1-ին փողոց, շենք 14
Շինություն՝ Մշակույթի տուն
Ակտի կազմման օրն ու ամսաթիվը՝ 14 հոկտեմբեր 2025թ.

Հանձնաժողովը՝ ուսումնասիրելով Նոր Արթիկ բնակավայրի մշակույթի տան շենքի տեխնիկական վիճակը, արձանագրել է մի շարք թերություններ և անհրաժեշտություն՝ իրականացնել համապատասխան վերանորոգման և վերականգնման աշխատանքներ:

| № | **Թերության նկարագրություն** | **Անհրաժեշտ աշխատանքների նկարագրություն** | **Նշումներ** |
|---|---|---|---|
| 1 | Փոքր դահլիճի փայտե հատակի և բեմահարթակի հատվածներում առկա են կոտրված և մաշված տախտակներ | Վերականգնել և փոխարինել վնասված փայտե հատակները, իրականացնել լամինատե ծածկի տեղադրում | |
| 2 | Առաստաղի և պատերի որոշ հատվածներ վնասված են | Նորոգել վնասված հատվածները և ներկել | |
| 3 | Դահլիճում լուսավորությունը անբավարար է | Տեղադրել նոր լուսավորության համակարգ և ապահովել անվտանգությունը | |
| 4 | Շենքում բացակայում է սանհանգույցը | Կառուցել սանհանգույց՝ ապահովելով ջրամատակարարում | |
| 5 | Կոյուղագծի միացումը բացակայում է | Իրականացնել կոյուղագծի միացում կենտրոնական համակարգին | |
| 6 | Միջանցքի պատերն ու հատակը մաշված են | Նորոգել միջանցքի պատերն ու հատակը, իրականացնել ներկում | |
| 7 | Հանդերձարանը վերանորոգման կարիք ունի | Նորոգել պատերը, հատակը, ապահովել կահավորանք և լուսավորություն | |

| | | | |
|---|---|---|---|
| 8 | Դռները մաշված և անսարք են | Փոխարինել նոր դռներով՝ համապատասխան չափանիշներով | |
| 9 | Արտաքին հատվածում տանիքի ջրահեռացման համակարգը բացակայում է | Տեղադրել նոր ջրահեռացման համակարգ՝ ապահովելով անձրևաջրերի հեռացումը | |
| 10 | Գրադարանի տարածքում ջեռուցում չկա | Տեղադրել էլեկտրական տաքացուցիչներ՝ ապահովելով անվտանգ միացում | |

**Պատասխանատու անձինք՝**

Անժելա Դիլանյան

Մնացական Ներսիսյան

Գևորգ Հայրապետյան